«Գրանցված է»

ՀՀ արդարադատության
նախարարության կողմից

12 հոկտեմբերի 2017 թ.

Պետական գրանցման թիվ 12417399

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

25 սեպտեմբերի 2017 թ. N 327-Ն

ք. Երևան

ՀՐԱՄԱՆ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ, ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 289-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերը և 290-րդ հոդվածի 5-րդ մասը՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել՝

1) անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկ վճարողի հաշվառման համար տրամադրելու և հաշվառման կանգնելու դիմումի ձևը, լրացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) նոտարներին հարկ վճարողի հաշվառման համար տրամադրելու և հաշվառման կանգնելու դիմումի ձևը, լրացման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններին և հյուպատոսական հիմնարկներին, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպություններին հարկ վճարողի հաշվառման համար տրամադրելու և հաշվառման կանգնելու դիմումի ձևը, լրացման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի,

4) Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկ վճարողի հաշվառման համար տրամադրելու և հաշվառման կանգնելու դիմումի ձևը, լրացման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի,

5) Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ կազմակերպություններին հարկ վճարողի հաշվառման համար տրամադրելու և հաշվառման կանգնելու դիմումի ձևը, լրացման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի,

6) հարկ վճարողի հաշվառման վկայականի ձևը՝ համաձայն N 6 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Վ. Հարությունյան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2017 թ. սեպտեմբերի 25-ի
N 327-Ն հրամանի

Ձև

ԴԻՄՈՒՄ
ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԵՎ ՆՈՏԱՐ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԵԶԻԴԵՆՏ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ

1. Ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանունը _____

_____

2. Ֆիզիկական անձի հաշվառման վայրը, հեռ. _____

_____

3. Ֆիզիկական անձի բնակության վայրը, հեռ._____

_____

4. Ֆիզիկական անձի անձնագրային տվյալները, ՀԾՀ-ն _____

_____

5. Ֆիզիկական անձի գործունեության իրականացման վայրը, հեռ. _____

_____

6. Դիմումի ներկայացման ամսաթիվը _____

_____

7. Կցվող փաստաթղթերը _____

_____

Ֆիզիկական անձ _____
(ստորագրությունը)

ԿԱՐԳ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԵՎ ՆՈՏԱՐ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԵԶԻԴԵՆՏ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ԼՐԱՑՄԱՆ

1. Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկ վճարողի հաշվառման համար տրամադրելու և հաշվառման կանգնելու դիմումի (այսուհետ՝ դիմում) 1-ին տողում լրացվում են անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձի (այսուհետ՝ ֆիզիկական անձ) անուն, ազգանուն, հայրանունը:

2. Դիմումի 2-րդ տողում լրացվում են ֆիզիկական անձի հաշվառման վայրի հասցեն և հեռախոսահամարը:

3. Դիմումի 3-րդ տողում լրացվում են ֆիզիկական անձի փաստացի բնակության վայրի հասցեն և հեռախոսահամարը:

4. Դիմումի 4-րդ տողում լրացվում են ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ նույնականացման քարտի համարը, հանրային ծառայությունների համարանիշը, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ լիազոր մարմնի տրամադրված տեղեկանքի համարը:

5. Դիմումի 5-րդ տողում լրացվում են ֆիզիկական անձի գործունեության վայրի հասցեն և հեռախոսահամարը:

6. Դիմումի 6-րդ տողում լրացվում է դիմումի ներկայացման օրը, ամիսը, տարին:

7. Դիմումին կցվում են անձնագրի կամ նույնականացման քարտի և հանրային ծառայությունների համարանիշի, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության մասին լիազոր մարմնի տրամադրած տեղեկանքի պատճենները:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2017 թ. սեպտեմբերի 25-ի
N 327-Ն հրամանի

Ձև

ԴԻՄՈՒՄ
ՆՈՏԱՐՆԵՐԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ

1. Նոտարի անուն, ազգանուն, հայրանունը _____

_____

2. Նոտարական տարածքը _____

_____

3. Նոտարական գրասենյակը, հեռ. _____

_____

4. Նոտարի անձնագրային տվյալները, ՀԾՀ-ն _____

_____

5. Նոտարի վկայականի համարը և տրման ամսաթիվը _____

_____

6. Դիմումի ներկայացման ամսաթիվը _____

_____

7. Կցվող փաստաթղթերը _____

_____

Նոտար _____
(ստորագրությունը)

ԿԱՐԳ

ՆՈՏԱՐՆԵՐԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ԼՐԱՑՄԱՆ

1. Նոտարներին հարկ վճարողի հաշվառման համար տրամադրելու և հաշվառման կանգնելու դիմումի (այսուհետ՝ դիմում) 1-ին տողում լրացվում են նոտարի անուն, ազգանուն, հայրանունը:

2. Դիմումի 2-րդ տողում լրացվում է նոտարական տարածքի անվանումը:

3. Դիմումի 3-րդ տողում լրացվում են նոտարական գրասենյակի գտնվելու վայրի հասցեն և հեռախոսահամարը:

4. Դիմումի 4-րդ տողում լրացվում են նոտարի անձնագրի սերիան և համարը կամ նույնականացման քարտի համարը, հանրային ծառայությունների համարանիշը, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ լիազոր մարմնի տրամադրված տեղեկանքի համարը:

5. Դիմումի 5-րդ տողում լրացվում են նոտարի ծառայողական վկայականի համարը և տրման ամսաթիվը:

6. Դիմումի 6-րդ տողում լրացվում է դիմումի ներկայացման օրը, ամիսը, տարին:

7. Դիմումին կցվում են անձնագրի կամ նույնականացման քարտի, հանրային ծառայությունների համարանիշի, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության մասին լիազոր մարմնի տրամադրած տեղեկանքի և նոտարի պաշտոնի նշանակման մասին հրամանի կամ որոշման պատճենները:

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2017 թ. սեպտեմբերի 25-ի
N 327-Ն հրամանի

Ձև

ԴԻՄՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՆ, ԴՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ

1. Կազմակերպության անվանումը _____

_____

2. Կազմակերպության կարգավիճակը/հավատարմագրումը հաստատող փաստաթուղթը

_____

3. Կազմակերպության մշտական ներկայացուցչության գտնվելու վայրը, հեռ. _____

_____

_____

4. Կազմակերպության լիազորված պաշտոնատար անձի անձնագրային տվյալները, ՀԾՀ-ն

_____

5. Դիմումի ներկայացման ամսաթիվը _____

_____

6. Կցվող փաստաթղթերը _____

_____

Պաշտոնատար անձ _____
(ստորագրությունը)

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՆ, ԴՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻԼՐԱՑՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններին և հյուպատոսական հիմնարկներին, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպություններին հարկ վճարողի հաշվառման համար տրամադրելու և հաշվառման կանգնելու դիմումի (այսուհետ՝ դիմում) 1-ին տողում լրացվում են Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) անվանումը:

2. Դիմումի 2-րդ տողում լրացվում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրված՝ կազմակերպության կարգավիճակը (հավատարմագրումը) հավաստող փաստաթղթի (տեղեկանքի) համարը և տրման ամսաթիվը:

3. Դիմումի 3-րդ տողում լրացվում են կազմակերպության մշտական ներկայացուցչության (մասնավորապես՝ նստավայր, գրասենյակ) գտնվելու վայրի հասցեն և հեռախոսահամարը:

4. Դիմումի 4-րդ տողում լրացվում են կազմակերպության լիազորված պաշտոնատար անձի անուն, ազգանունը, անձնագրի սերիան և համարը կամ նույնականացման քարտի համարը, հանրային ծառայությունների համարանիշը, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ լիազոր մարմնի տրամադրված տեղեկանքի համարը (առկայության դեպքում):

5. Դիմումի 5-րդ տողում լրացվում է դիմումի ներկայացման օրը, ամիսը, տարին:

6. Դիմումին կցվում է Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների կարգավիճակը (հավատարմագրումը) հավաստող փաստաթղթի պատճենը:

Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2017 թ. սեպտեմբերի 25-ի
N 327-Ն հրամանի

Ձև

ԴԻՄՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ

1. Ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանունը _____

_____

2. Ֆիզիկական անձի ռեզիդենտության երկիրը _____

_____

3. Ֆիզիկական անձի անձնագրային տվյալները, ՀԾՀ-ն _____

_____

4. Ֆիզիկական անձի բնակության վայրը, հեռ. _____

_____

5. Ֆիզիկական անձի գործունեության իրականացման վայրը, հեռ. _____

_____

6. Դիմումի ներկայացման ամսաթիվը _____

_____

7. Կցվող փաստաթղթերը _____

_____

Ֆիզիկական անձ _____

(ստորագրությունը)

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ԼՐԱՑՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկ վճարողի հաշվառման համար տրամադրելու և հաշվառման կանգնելու դիմումի (այսուհետ՝ դիմում) 1-ին տողում լրացվում են Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) անուն, ազգանուն, հայրանունը:

2. Դիմումի 2-րդ տողում լրացվում է ֆիզիկական անձի ռեզիդենտության երկրի անվանումը:

3. Դիմումի 3-րդ տողում լրացվում են ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ լիազոր մարմնի տրամադրված տեղեկանքի համարը (առկայության դեպքում):

4. Դիմումի 4-րդ տողում լրացվում են ֆիզիկական անձի փաստացի բնակության վայրի հասցեն և հեռախոսահամարը:

5. Դիմումի 5-րդ տողում լրացվում են ֆիզիկական անձի գործունեության վայրի հասցեն և հեռախոսահամարը:

6. Դիմումի 6-րդ տողում լրացվում է դիմումի ներկայացման օրը, ամիսը, տարին:

7. Դիմումին կցվում է անձնագրի պատճենը:

Հավելված N 5
Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2017 թ. սեպտեմբերի 25-ի
N 327-Ն հրամանի

Ձև

ԴԻՄՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ

1. Կազմակերպության անվանումը _____

_____

2. Կազմակերպության ռեզիդենտության երկիրը _____

_____

3. Կազմակերպության հիմնադիր փաստաթղթի տվյալները _____

_____

4. Կազմակերպության գործունեության վայրը, հեռ. _____

_____

5. Կազմակերպության լիազորված պաշտոնատար անձի անձնագրային տվյալները, ՀԾՀ-ն

_____

6. Դիմումի ներկայացման ամսաթիվը _____

_____

7. Կցվող փաստաթղթերը _____

_____

Պաշտոնատար անձ _____
(ստորագրությունը)

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ԼՐԱՑՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ կազմակերպություններին հարկ վճարողի հաշվառման համար տրամադրելու և հաշվառման կանգնելու դիմումի (այսուհետ՝ դիմում) 1-ին տողում լրացվում է Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) անվանումը:

2. Դիմումի 2-րդ տողում լրացվում է կազմակերպության ռեզիդենտության երկրի անվանումը:

3. Դիմումի 3-րդ տողում լրացվում են կազմակերպության հիմնադիր փաստաթղթի գրանցման ամսաթիվը:

4. Դիմումի 4-րդ տողում լրացվում են կազմակերպության (մշտական հաստատության) գործունեության վայրի հասցեն և հեռախոսահամարը:

5. Դիմումի 5-րդ տողում լրացվում են կազմակերպության լիազորված պաշտոնատար անձի անուն, ազգանունը, անձնագրի սերիան և համարը կամ նույնականացման քարտի համարը, հանրային ծառայությունների համարանիշը, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ լիազոր մարմնի տրամադրված տեղեկանքի համարը (առկայության դեպքում):

6. Դիմումի 6-րդ տողում լրացվում է դիմումի ներկայացման օրը, ամիսը, տարին:

7. Դիմումին կից ներկայացվում է կազմակերպության ռեզիդենտության երկրում գրանցումը հավաստող հիմնադիր փաստաթղթի պատճենը:

Հավելված N 6
Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2017 թ. սեպտեմբերի 25-ի
N 327-Ն հրամանի

Ձև

ՎԿԱՅԱԿԱՆ
ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

_____

(Ֆիզիկական անձի (ոչ ռեզիդենտ)/նոտարի անուն ազգանունը կամ դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հիմնարկի, միջազգային կազմակերպության/ոչ ռեզիդենտ կազմակերպության անվանումը)

ՀՎՀՀ-ն _____

Հաշվառման է վերցված _____

հարկային մարմնի կողմից՝ 201 թ. _____ _____ -ին:

հարկային մարմնի պաշտոնատար անձ _____

_____

(պաշտոնը, անունը, ազգանունը) (ՊԵԿ ծրագրային սերվերի ստորագրություն)